ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 03 նոյեմբերի 2026թ.

ժամը 12:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռուբեն Այվազյան

Հանձնաժողովի անդամներ՝ Տիրան Խաչատրյան, Արթուր Մարգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

1.Էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետի և սկսելու մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/2» ծածկագրով 21.10.2026թ.-ին հայտարարված էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 02.11.2026թ-ին ժամը 11:30-ին, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվել է 03.11.2026թ.-ին ժամը 11:30-ին:

2. Գնման հայտով սահմանված գնման առարկաների քանակը և գինը.

Չափաբաժնի հ/հ	Անվանումը	Հաստատված քանակը	Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտով նախատեսվող գին /ՀՀ դրամ/
1.	Մետաղորսիչներ	69 հատ	5.520.000

3. Էլեկտրոնային աճուրդի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

3.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/2» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդին մասնակցել է թվով 8 մասնակից.

Հ/Հ	Մասնակցի անվանումը /անունը/	ՀՎՀՀ	Հասցե	Հեռ.
1.	«ՏԻԳՄԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	00890518	Ք. Երևան, Մոլդովական 20, 40շ.	091-91-99-01
2.	«ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ	02337713	Ք. Երևան, Շենգավիթ Բագրատունյաց փ., 24/3	099-01-66-61
3.	«ԺՈՋԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	01044164	Ք. Երևան, Գյուրջյան 60, բն. 2	041-36-02-66
4.	«ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ	02671392	Ք. Երևան, Դեմիրճյան փ., շ. 36, բն. 8	094-80-83-04
5.	«Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ	00521878	Ք. Երևան, Նոր Արեշ 41փ., 111տ.,	033-08-55-03
6.	«Արմեն Սաֆարյան» Ա/Ձ	85445888	Ք. Երևան, Հյուսիսային պ. 6/2	055-66-31-34
7.	«Անանիքս» ՍՊԸ	03593981	Կոտայք, Աբովյան 3մկրշ. 48 44	095-55-56-14
8.	«Սիրրա» ՍՊԸ	01455296	-	-

3.2 Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած Մասնակցի՝ «ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ-ի դիմում-հայտարարությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատել բավարար:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4.Տեղեկություններ հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին

4.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/2» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ հարցումներն և պարզաբանումները ներկայացված են ստորև.

ՀԱՐՑՈՒՄ 1. Հարգելի գործընկեր. Խնդրում եմ հստակեցնել՝ Հարց 1. Պետք է առկա լինի ականջակալների միացման հնարավորություն (3.5 մմ): Կարող ենք առաջարկել սարք, օրինակ, որը հագեցած է Type-C միակցիչով, որը թույլ է տալիս միացնել Type-C ականջակալներ (ականջակալները ներառվում են յուրաքանչյուրի հավաքացուի մեջ, թե ոչ): Հարց 2. Արդյոք Ձեր համար ընդունելի տարբերակներ են սարքի չափերի որոշակի տարբերություններ +/-5% շեղուներ, և աշխատանքային ջերմաստիճանի տարբերություններ, օրինակ -25°C to +65°C (ինչը թույլատրելի է գնումների օրենքով): Հարգանքով՝

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ 1. Ի պատասխան Ձեր հարցմանը՝ հայտնում ենք, որ մետաղորսիչ սարքերի մատակարարումը պետք է իրականացվի համապատասխան տեխնիկական բնութագրում նշված չափանիշների: Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքն ընդունելի չէ:

ՀԱՐՑՈՒՄ 2. Հարգելի գործընկեր. ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 22-րդ հոդվածի պահանջների կատարումն ապահովելու նպատակով խնդրում եմ սահմանել գնվող առարկայի տեխնիկական բնութագրի թույլատրելի շեղումների չափերը (տոկոսային հարաբերակցությամբ), հատկապես գծային չափերի, աշխատանքային ջերմաստիճանի և այլ անհրաժեշտ պայմանների (ականջակալների միացման բնիկի ալտերնատիվ տարբերակ): Միևնույն ժամանակ նշել, արդյոք ականջակալերը ներառվում են թե ոչ: Կանխավ շնորհակալություն: Հարգանքով՝

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ 2. Հարգելի գործընկեր. Ի պատասխան Ձեր հարցմանը՝ հայտնում ենք, որ գնվող առարկայի տեխնիկական բնութագրի բոլոր թույլատրելի շեղումները կարող են լինել ±5%-ի միջակայքում, ականջակալների միացման բնիկի ալտերնատիվ տարբերակը ընդունելի է, ականջակալերի ներառված լինելը պարտադիր չէ:

5. Մասնակիցների գնային առաջարկները.

5.1. Մասնակիցների կողմից առաջարկված նախնական և վերջնական գնային առաջարկները, ըստ չափաբաժնի, ներկայացված են սույն արձանագրության N1 Հավելվածում (կցվում է):

6. Ընթացակարգի ընտրված՝ հաղթող, մասնակցին որոշելու և հայտարարելու մասին.

6.1. Հիմք ընդունելով Մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը և վերջնական գնային առաջարկները՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

- N 1 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին.

7.1.Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

7.2. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/2» ծածկագրով գնման ընթացակարգի համար "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

7.3. Ընտրված՝ հաղթող, մասնակցի հետ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Նախագահ՝_____ **Ռ. Այվազյան**

Քարտուղար՝_____ **Ն.Աբովյան**

Հանձնաժողովի անդամներ՝

1. _____ **Տ. Խաչատրյան**
2. _____ **Ա. Մարգարյան**

Հավելված 1 ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/2 ծածկագրով գնման ընթացակարգի Մասնակիցների գնային առաջարկներ ՀՀ դրամ

Չափաբաժնի համար	Չբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ	Շնորհման կառավարում
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին		
1	1	ՎԱՆԵՍԱ ՍՊԸ	5520000	100000000	20 %	120000000	3420000	20 %	4104000.00		
1	2	ԺՈՂԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ	5520000	5520000	0 %	5520000	3519000	0 %	3519000.00		
1	3	Տիգման Գրուպ ՍՊԸ	5520000	5000000	20 %	6000000	3630000	20 %	4356000.00		
1	4	ՌՎ Պրոջեկտս ՍՊԸ	5520000	4000010	0 %	4000010	4000010	0 %	4000010.00		
1	5	Սիգմա Էլեկտրոնիքս ՍՊԸ	5520000	5000000	20 %	6000000	5000000	20 %	6000000.00	Մերժված	
1	6	Արմեն Սաֆարյան ԱՁ	5520000	5000000	20 %	6000000	5000000	20 %	6000000.00	Մերժված	
1	7	Անանիքս ՍՊԸ	5520000	6900000	20 %	8280000	6900000	20 %	8280000.00	Մերժված	
1	8	Սիրրա ՍՊԸ	5520000	25000000	20 %	30000000	25000000	20 %	30000000.00	Մերժված	